Ս. Գևորգ, Դսեղի Ս. Գրիգոր Լուսավորիչ, Շնողի Ս. Սարգիս, Մղարթի, Արդվիի, Հագվիի, Լորուտի, Մարցի, Թեղուտի, Ճոճկանի և այլ եկեղեցիները, ինչպես նաև Սանահին վանքի Ս. Աստվածածին եկեղեցին: Այս եկեղեցիներից Օձունի, Սանահինի, Աքորիի, Դսեղի և Շնողի եկեղեցիներում արդեն իսկ կատարվում են կրոնական արարողություններ: Յուրաքանչյուր եկեղեցուն կից ստեղծվել է հինգանձնյա համայնքային խորհուրդ, որոնք ընկրսել են հանգանակություն՝ մասնակից լինելու համար իրենց եկեղեցիների վերանորոգման ծախսերին:

Գ.— Նկատի ունենալով կրոնական դաստիարակության կարևորությունը, Հաղպատավանքի վանահայրությունը կազմել է կրոնի դասերի մի հատուկ ծրագիր հանրակրթական դպրոցների վերջին երեք դասարանների համար, գործադրվում է Ալավերդի քաղաքի երեք միջնակարգ, երկու երաժշտական, Օձունի և Աքորիի դպրոցներում: Դասավանդությունները կատարում են Հաղպատավանքի դպրանոցի ավագ սաները, վանահոր գլխավորությամբ և անմիջական հսկողությամբ:

ՆՈՐ ԱՌԱՋՆՈՐԴԻ ՆՇԱՆԱԿՈՒՄ ՇԻՐԱԿԻ ՀԱՅՈՑ ԹԵՄՈՒՄ

Ամենայն Հայոց Կաթողիկոս Տ. Տ. Վազգեն Ա Վեհափառ Հայրապետի կարգադրությամբ սույն թվականի նոյեմբերին Շիրակի թեմի առաջնորդ է նշանակվում Արգենտինայի հայոց թեմի նախկին առաջնորդ Մայր Աթոռի միաբան Տ. Գրիգորիս եպս. Բունիաթյանը, որ իննամյա իր ծառայությունից հետո վերադարձել է հայրենիք: Թեմի նախկին առաջնորդը՝ Տ. Նարեկ եպս. Շաքարյանը, մոտ 20 տարվա ծառայությունից հետո, հրավիրվել է Մայր Աթոռ նոր պատասխանատու պաշտոն ստանձնելու համար:

Նոր առաջնորդի աթոռակալության արարողությունը տեղի ունեցավ նոյեմբերի 25-ին, կիրակի օրը, Կումայրիի Ս. Յոթ Վերք եկեղեցում: Ս. պատարագի ընթացքում կարդացվեց Վեհափառ Հայրապետի սրբատառ կոնդակը նոր առաջնորդի նշանակման մասին: Հրաժեշտի և օրհնության խոսքերով հավատացյալներին դիմեցին Տ. Նարեկ և Տ. Գրիգորիս սրբազանները:

Հավարտ ս. պատարագի Ս. Յոթ Վերք եկեղեցու ավանդատան մեջ Տ. Գրիգորիս եպիսկոպոսը ընդունեց Կումայրիի հավատացյալ ժողովրդի, ինչպես նաև տեղի իշխանության ներկայացուցիչների և մտավորականների շնորհավորանքները:

ԹԱԼԻՆԻ Ս. ԱՍՏՎԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑՈՒ ՕԾՈՒՄԸ

Սույն թվականի դեկտեմբերի 8-ին մեծ հանդիսավորությամբ և բազմահազար ժողովրդի ներկայությամբ կատարվեց Թալինի Ս. Աստվածածին եկեղեցու օծումը, ձեռամբ Շիրակի թեմի նորընտիր առաջնորդ Տ. Գրիգորիս եպս. Բունիաթյանի և մասնակցությամբ Տ. Նարեկ եպս. Շաքարյանի ու Տ. Անանիա եպս. Արաբաջյանի: Օծումից հետո առաջնորդ սրբազան հայրը մատուցեց ս. պատարագ: Հավուր պատշաճի քարոզով հանդես եկան երեք եպիսկոպոսները:

Թալինի Ս. Աստվածածին եկեղեցին վերաբացվել է 1989 թվականին և մեկ տարվա ընթացքում ենթարկվել է հիմնական նորոգության: Նորոգման աշխատանքները և ծախսերը ամբողջությամբ կատարվել է շրջանի բնակչության նախաձեռնությամբ և անմիջական մասնակցությամբ տեղի ավանային ղեկավարության: Կատարված է մեծ և շնորհակալ աշխատանք:

Թալինի Ս. Աստվածածին եկեղեցու հոգևոր հովիվ է նշանակվել ճեմարանավարտ Տ. Մյուռոն քահանա Ադամյանը: Հետ այսու Ս. Աստվածածին եկեղեցին իր արժանի տեղը և դերը պիտի ունենա շրջանի ժողովրդի հոգևոր կյանքում:

ԵՐԿՐԱՇԱՐԺԻ ԵՐԿՐՈՐԴ ՏԱՐԵԼԻՑ

Երկու տարի անցավ այն չարաբաստիկ օրից, երբ երկրաշարժի ահավոր հարվածից ավերվեցին մեր պատմական Շիրակի և Լոռվա աշխարհի շենները, գյուղերն ու քաղաքները և զոհվեցին ավելի քան 25 հազար հոգի:

Այս տարի ևս Հայ Եկեղեցին պատշաճ հանդիսավորությամբ նշեց հայ բյուրավոր զոհերի հիշատակը: Դեկտեմբեր 7-ին, ուրբաթ օրը, հնչեցին Ս. Էջմիածնի Մայր տաճարի և Հայաստանի բոլոր եկեղեցիների ու վանքերի զանգակները, մատուցվեցին ս. պատարագներ և կատարվեցին հոգեհանգստյան արարողություններ:

Դեկտեմբերի 8-ին, շաբաթ օրը, Երևանի Հայհամերգի մեծ դահլիճում տեղի ունեցավ սգո համերգ՝ մասնակցությամբ հայրենի արվեստագետների: Ներկա էին Վեհափառ Հայրապետը և Մայր Աթոռի միաբանությունը: Այս առթիվ դահլիճի բեմի վրա կատարվեց հոգեհանգստյան արարողություն՝ մասնակցությամբ Մայր Աթոռի երիտասարդ միաբանների: Մխիթարական խոսքով հանդես եկավ Տ. Շնորհք աբեղ. Բաղդասարյանը:

Դեկտեմբերի 9-ին, կիրակի օրը, դարձյալ ս. պատարագներ մատուցվեցին և հոգեհանգստյան արարողություններ կատարվեցին հայոց բոլոր եկեղեցիներում: Մայր տաճարում ս. պատարագ մատուցեց Տ. Նաթան վրդ. Հովհաննիսյանը, իսկ քարոզեց Մայր Աթոռի դիվանապետ Տ. Ներսես արքեպս. Պոզապալյանը:

ԵՐԿՐԱՇԱՐԺԻ ՏԱՐԵԼԻՑԸ ՇԻՐԱԿԻ ԹԵՄՈՒՄ

1988 թ. երկրաշարժի զոհերի երկրորդ տարելիցի առթիվ սույն թվականի դեկտեմբերի 7-ին մատուցվեցին ս. պատարագներ և կատարվեցին հոգեհանգստյան արարողություններ Շիրակի թեմի բոլոր եկեղեցիներում: Ի մասնավորի Կումայրի քաղաքում, կենտրոնական հրապարակի վրա, Ս. Ամենափրկիչ եկեղեցու ավերակների առջև բարձրացված հատուկ բեմահարթակի վրա պատարագեց և քարոզեց Շիրակի թեմի առաջնորդ Տ. Գրիգորիս եպս. Բունիաթյանը, մասնակցությամբ քաղաքի ողջ եկեղեցական դասի: Պատարագին ներկա էին Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհրդի նախագահության անդամներ և պատգամավորներ, Կումայրիի ողջ ղեկավարությունը, Հանրապետության և Կումայրի քաղաքի հասարակայնության ներկայացուցիչներ, ինչպես նաև բազմահազար ժողովուրդ: Հավարտ ս. պա-